



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 122/30 " 10 " 08 2013

ԵՊՀ ՌԵԿՏՈՐԻՆ ԿԻՑ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նպատակ ունենալով բարձրացնել ԵՊՀ-ում իրականացվող տեխնիկական, տեղեկատվական, տեխնոլոգիական խնդիրների հետ կապված աշխատանքների արդյունավետությունը՝

Հրամայում եմ՝

1. Ստեղծել ԵՊՀ ռեկտորին կից տեխնիկական խորհուրդ (այսուհետ՝ Խորհուրդ) և հաստատել Խորհրդի կանոնակարգը (կցվում է):
2. Հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ռեկտոր՝

Ա. Միմոնյան



Հաստատված է

ԵՊՀ ռեկտորի

10 » 09

2013 թ-ի

№ 122 ց 30

հրամանով

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Երևանի պետական համալսարանի ռեկտորին կից տեխնիկական խորհրդի

1. ԵՊՀ ռեկտորին կից տեխնիկական խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) խորհրդակցական մարմին է, որը ձևավորվում է ԵՊՀ ռեկտորի հրամանով:
2. Խորհրդի նպատակն է աջակցել ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրից բխող տեխնիկական, տեղեկատվական, տեխնոլոգիական և ճարտարագիտական խնդիրների լուծմանը, քննարկել համալսարանի համար կարևոր նշանակություն ունեցող ծրագրերն ու նախաձեռնությունները, ներկայացնել համապատասխան առաջարկություններ:
3. Խորհրդի նախագահը ԵՊՀ ռեկտորն է: Խորհրդի նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության ԵՊՀ ռեկտորի կողմից:
4. Խորհրդի կազմը հաստատվում է ԵՊՀ ռեկտորի կողմից՝ 2 տարի ժամկետով: Խորհրդի կազմի մեջ են մտնում ռեկտորը, պրոռեկտորները, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի ղեկանը, Տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման վարչության պետը, գլխավոր հաշվապահը, Տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական կենտրոնի տնօրենը, ինչպես նաև համալսարանի այլ ստորաբաժանումների ղեկավարներն ու աշխատակիցները:
5. Ռեկտորի հրավերով Խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով, մշտական կամ ժամանակավոր հիմունքներով կարող են մասնակցել համապատասխան կարգավիճակ կամ որակավորում ունեցող մասնագետներ:
6. Խորհրդում որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ: